ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ИНФОРМАЦИЯ

ՄԻ ԷՋ ՆՈՐԱԳԱՎԹԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Նորագավիթը միջին դարերում եղել է մեծ, ազդեցատ և բազմամարդ մի ավան։ Աղբյուրներում նա հաճախ հիշատակվում է որպես գյուղաքաղաք. հատկապես XIII դարից մինչև XVII դ. առաջին կեսը նա համարվել է Արարատյան դաշտավայրի բարեկեցիկ անկյուններից մեկը։ 1679 թ. Երևանի մեծ երկրաշարժից հետո Նորագավիթը կորցրել է իր նախկին նշանակությունը և մասամբ դատարկվել։

XIX դարից սկսած Նորագավիթը նորից դառնում է մարդաշատ և համարվում է Կոտայք գավառի միջին մեծության գյուղերից մեկը[1]։ Մինչև հիշյալ երկրաշարժը Նորագավիթը ունեցել է մեծ թվով պատմական հուշարձաններ այստեղ են գտնվել ս. Գևորգ, ս. Գրիգոր, ս. Սարգիս, ս. Աստվածածին, ս. Կարապետ, Միրանավոր, ս. Նահատակ եկեղեցիները։ Այն փաստը, որ Նորագավիթը ունեցել է այդքան շատ եկեղեցիներ, խոսում է նրա մեծության մասին։ Այդ բոլոր եկեղեցիները կործանվել են վերը հիշատակված երկրաշարժի ժամանակ։ Հետագայում XVIII դարի վերջում և XIX դարում կործանված եկեղեցիների մի մասի հիմքերի վրա կառուցվում են նոր եկեղեցիներ նույն անուններով, ինչպես օրինակ՝ ս. Գևորգ և ս. Աստվածածին, որոնք կանգուն են մինչև օրս։ Եկեղեցիների մյուս խումբը կործանված է և մինչև օրս երևում են ավերակների մնացորդները։

Հովհաննավանքի արձանագրություններից մեկում, որը գրվել է XIII դարի առաջին քառորդում, ոմն Նորագավթեցի Առաքել երեցը եկեղեցու շինության համար տվել է 300 դահեկան և գրա դիմաց ստացել պատարագներ[2]։ Այդ նույն ժամանակում է գրվել Երևանի Կաթողիկե եկեղեցու պատի արձանագրություններից մեկը, որի միջին տողերում կարդում ենք հետևյալը.

ԵՍ Դ(Է)ՈՐԳ ՄԵՂՈՒՅՑԵԱԼ ԾԱՌԱՅ ԱՅ ԵՎ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ԴԱՒ
ԼԱՔ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ ԵՐԵՎԱՆՈՅ ԺԱՄԱՏԵՂԱՅՍ ԵՎ

. . . . . .

ՏՎԱՔ Ի ՆՈՐԱԳԱՒԻԹ ԶՄԵՐ ՀՈՂՆ ՈՐ Ի ԴՐԻԱԿԱՆ Է

. . . . . .

Արձանագրության թվականն է՝ 1318։

Մի այլ արձանագրության մեջ, գրված Հավուց թառ վանքի պատին, Նորագավթեցի ամիր Սարգիսը իր կնոջ՝ Էրմանիի և եղբոր՝ Ամիրի հետ միաբանում են՝ վանքին նվիրելով Երևանում գնած իրենց այգին և ջրաղացը[3]։ Արձանագրության մեջ նվիրաբերող Սարգիսը իրեն անվանում է «...ամիր Սարգիս Նորագաւթեցի»։ ամիր տիտղոսը այդ ժամանակներում կրում էին քաղաքապետները կամ ավանի պետերը, հետևաբար Նորագավիթը մի այդպիսի կարևոր վայր է եղել։

1465 թ. Նորագավթում գրիչ Հայրապետի կողմից գրվել է մի ավետարան, որի հիշատակարանում խոսվում է Նորագավթի ս. Գևորգ եկեղեցու և նրա քահանաներ Զաքարիայի և Աստվածատուրի մասին, որոնք այդ ավետարանը պահում և խնամք են տանում[4]։

1689 թ., Գրիգոր Երևանցի գրչի և նկարչի ձեռքով գրած և զարդանկարած նշանավոր «Հայսմավուրքի» սկիզբը և վերջը գրվել են Վաղարշապատում, իսկ միջին՝ մեծագույն մասը «ի գիւղաքաղաքն Նորագաւիթ»[5]։ Փաստը ցույց է տալիս, որ ավերվելուց հետո էլ Նորագավիթը լրիվ չի կորցնում գյուղաքաղաքի իր նշանակությունը և եղել է այնպիսի բարենպաստ վայր, որ ծագումով երևանցի Գրիգորը երկար ժամանակ այնտեղ է ապաստանել և աշխատել։

Առանձնակի նշանակություն ունի Երևան քաղաքի պատմության թանգարանում պահվող մի արձանագրված քար, որը թանգարան է բերվել 1937 թ. Նորագավթից։ Քարը բերվել է երկրաշարժից հետո նորոգման չենթարկված ս. Գրիգոր

---

1 Ալիշան, Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 285։

2 Ղաֆադարյան, Հովհաննավանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1948, էջ 87։

3 Գարեգին արք. Հովսեփյանց, Հավուց թառի Ամենափրկիչը և նույնանուն հուշարձաններ հայ արվեստի մեջ, էջ 26։

4 «Ժե դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մաս Գ, էջ 443։

5 Գ. Հովսեփյան, Խաղբակյանք կամ Պռոշյանք հայոց պատմության մեջ, մաս Ա, էջ 255։

եկեղեցու փլատակներից։ Այն գորշ տուֆ է, ունի վնասվածքներ, իսկ վարի ձախ անկյան կողմից ունի բնական կոտրվածք։ Արձանագրություններ բաղկացած է յոթ տողից։ Առաջին տողում գրված է եղել միայն թվականը, որից համարյա ոչինչ չի պահպանվել, պարզ երևում է 6 տառը և ինչ որ գրի ուղղահայաց գծիկի ստորին մասը։ Երկրորդ տողի վերջից ջարդոտված են 2—3 տառեր։ Մնացած տողերը ամբողջական են, բայց քանի որ տողերը իրար հետ չեն կապվում, ուստի պետք է ենթադրել, որ վեց տողերի սկզբի մասերը տեղավորված են եղել մի այլ քարի վրա, որը չի պահպանվել։ Վերջին և նախավերջին տողի արանքում էլ ըստ երևույթին հետագայում ավելացվել է երեք տառ՝ Սխտ, որոնք կապ չունեն արձանագրության հետ։ Արձանագրության գրչության արվեստը թույլ է։ Այդպիսով, արձանագրության պահպանված մասով չի պարզվում թվականը, իսկ անհայտ գրչության հետևանքով մի շարք բառեր վերծանել անհնար է դառնում։ Առկա վիճակում արձանագրությունը ունի հետևյալ տեսքը և հնարավոր վերծանությունը։



— ՈՒ ։ Ե ։ . . . . . .
ՌԱՆՄԻ ԵՍ Շ[Ա]ՀԻՆՇԱ(Հ)
ԹՈՂԻ ՁՇԱՀՆԱ ՀԱԿՆ ԳԵՂ ԻՍ
ՍՊ[ԻՏԱԿ] ՁԳԱՐԻՆ ԵՒ ՁԽՈՏՆ ՍԱՆԿԱՅ
Ն ԱՌԻ ԵՒ ԱՅԼՅԵՏՏՈՒ ՁԱՄԱ
Յ ԲԵՐՆՈՎ ՁԱՅՍ ԳԻՐՍ ԽԱՓԱՆԵ ,ՅՃԺ[Ը]։ (318)
[ՀԱՅՐԱՊԵՏԱ]ՅՆ ՆՁՈՎԱՍ Ե ԱՄԵՆ։

Թվականի հարցը որոշելու համար կոված են հանդիսանում բնագրի մեջ պահպանված Շահնշահ անձնանվան և շահնա հարկի հիշատակությունը։

«Շահնշահը» որպես տիտղոս և անուն հայոց պատմության մեջ հիշատակվել է X դարից ըսկրսած և ունի պարսկական ծագում։ Հայտնի է, որ այն օգտագործվել է հատկապես Բագրատունիների և Զաքարյանների ժամանակ։ Հայ Բագրատունի թագավորներից «շահնշահ» տիտղոսը գործածված է Աշոտ Բ-ի, Գագիկ Ա-ի, Սմբատ Բ-ի համար[6]։ Բագրատունի թագավորների մոտ «շահնշահը» միայն որպես տիտղոս է օգտագործված, իսկ Զաքարյան տոհմի անդամների համար թե՛ որպես տիտղոս և թե՛ որպես անձնանուն։

Հայտնի են եղել Շահնշահ անձնանունը կրող երեք Զաքարյաններ։ Շահնշահ Ա՝ որդի Զաքարե ամիրսպասալարի (1212—1261), Շահնշահ Բ՝ թոռը Շահնշահ Ա-ի (? —1320 թ.) և Շահնշահ Գ՝ աթաբակ որդի Չագա աթաբակի, թոռն Իվանէ Բ-ի (1358— ?)։ Քանի որ Շահնշահը այս արձանագրության մեջ հանդես է գալիս որպես մեծանուն, ապա արձանագրությունը Բագրատունիներին չի կարող վերաբերել, այլ վերաբերում է Զաքարյաններին։ Վերը հիշատակված Զաքարյան երեք Շահնշահներից երրորդին նույնպես չի կարող վերաբերել, որովհետև նա իր տոհմի նախկին համամայկական տիրույթն ու փառքը ամփոփել էր մի փոքր տեղավայրում Բջնիի շուրջը։ Հետևաբար միայն առաջին և երկրորդ Շահնշահներին կարող է վերաբերել, որոնք տեր էին այն ժամանակվա ամբողջ Հայաստանին, և ինչպես արձանագրությունն է ցույց տալիս, տեր էին նաև Արարատյան դաշտին ու Նորագավթում հարկեր են գեղչել։



Ժամանակի հարցը պարզելուն օգնության է գալիս արձանագրության մեջ հիշատակված շահնա հարկը։ Ուսումնասիրողները միաբերան ցույց են տվել, որ շահնա հարկը հայ իրականության մեջ կիրառվել է մոնղոլական տիրապետության շրջանում[7]։ Շահնաները մոնղոլական պաշտոնյաներ էին, որոնց օգտին գանձվում էր շահնա կոչվող հարկը[8]։

Եթե ընդունենք, որ մոնղոլների շահնա հարկը նրանց տիրապետության սկզբից, այն է՝ 1240—1250 թթ. է հաստատված, ապա Շահն-

6 Կ. Դանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 88—89։

7 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Գ, Երևան, 1952, էջ 250։

8 Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, մաս I, էջ 419։

շահ առաջինը, որը մահացել է 1261 թ., հազիվ թե հնարավորություն ունենար այս նոր դրված հարկը վերաշնել, հետևաբար ավելի հավանական է, որ այս հարկի վերացումը գուդադիպի Շահնշահ Բ-ի տիրապետության շրջանին՝ XIII դարի վերջին կամ ավելի շուտ XIV դարի սկզբին, երբ մոնղոլական տիրապետությունը իր թուլացման շրջանն էր ապրում։ Այդպիսի մի փաստի հանդիպում ենք Հռիփսիմեի արձանագրությունում, որը գրված է 1296 թ.։ Այլ հարկերի հետ միասին Շահնշահը գեղչել է նաև շահնայի օգտին գանձվող բամբակի հարկը։

Կ. ԱՍԱՏՐՅԱՆ

АРХИТЕКТУРА АРМЯНСКИХ НАДГРОБНЫХ ПАМЯТНИКОВ В КИШИНЕВЕ

На бывшем армянском кладбище в Кишиневе сохранилось несколько десятков надгробных памятников XIX века. Как свидетельствуют надписи, переселившиеся сюда армяне были коренными жителями различных городов и местностей Армении — Тигранакерта, Акулиса и др. (рис. 1).*

Внимательное и комплексное изучение некоторых памятников позволяет пополнить историю материальной культуры зарубежных армян новыми интересными данными, а также проследить степень взаимосвязи и взаимовлияния местных культурных традиций с традициями армян, поселившихся на этой благодатной земле.

Надгробные памятники представляют собой каменные плиты из местного ракушечника серого цвета, высотой примерно в человеческий рост. Редко встречается белый мрамор. Плиты имеют в большинстве случаев вытянутую прямоугольную форму, иногда расширяющуюся к верху. Они устанавливались вертикально у за-



Рис. 1

падного конца могилы (рис. 2). Над могилой в горизонтальном положении устанавливалась плита такой же формы. На лицевой ее поверхности изображались, кроме креста, некоторые из тех элементов, которые предусмотрены евангелием и стали обязательными для христианского мира еще с V века (померкшие небесные светила в виде астрономических изображений, Голгофа в виде скалы или про-

* Արձանագրության վերծանությունը (ըստ Կ. Ղաֆադարյանի).

«Հողապատեան մայր իմ Նախ(ա)ծին
զորդիս ընկալ ի ծոց քոյին,
զի չիս բաժին իմ Յարուցչին
տացես անդրէն յօրն վերջին։
Տիգրանակերտ իմ հայրենիս,
Անտոն աւագ քահանայիս
Քիշնեւ քաղաքն եղն զար-դիս
որ ընկալա պ(ա)ակ կարգիս,
Ամք իմ կենաց լրիւ յիսուն
Վճարէ առ յայս անձուկ տուն։
Ոյք ելք բարիք և բարեմոյն,
տուք ինձ բանիւ զողորմութիւն։
Փրկչին մերոյ Թէական 1827-ին։
և յամսեանն մարտի տասներեքի
եղին ի սոյն գերեզմանիս։

* Կ. Կասատանյան. Վիմական տարեգիրք։ Ս. Պետերբուրգ, 1913, էջ 138։